# ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Տավուշի մարզ գ.Հովք

Հովքի միջնակարգ դպրոց՝4-րդ դասարան

Դասղեկ՝Նելլի Գագիկի Եղիկյան

| | |
|---|---|
| Ուս-շաբաթ I | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն<br>Ընդգրկել աշակերտներին ուսումնական դաստիարակության գործընթացին: Ընտրել դասարանի ավագ: |
| II | «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես» թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծիքություն և աշխարհայացք: |
| III | Հայաստանի անկախության օրվան նվիրված զրույց անցկացնել: Մատչելի ձևով նրանց գիտակցությանը հասցնել անկախության գաղափարը և իմաստը: |
| IV | «Եթե ես լինեի» թեմայով քննարկում: Նպատակը՝ վեր հանել կարողությունները: |
| V | «Իմ ուսուցիչը» պաստառի պատրաստում: Խոսել կրթության կարևորության մասին՝ հարգանք ձևավորել ուսման, դպրոցի և ուսուցչի նկատմամբ: |
| VI | Ներկայացնել փոքրիկ պատմություններ մարդկային և հասարակական խնդիրների մասին: |
| VII | Զրույց «Միասին լինել, իրար օգնել ընտանեկան ճիշտ փոխհարաբերություններ» թեմայով: |
| VIII | «Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում»: Նպատակը՝ երեխաներին ծանոթացնել իրենց իրավունքներին ու պարտականություններին: |
| IX | «Ես էլ քեզ նման եմ» թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ: |
| X | «Գնահատիր ինքդ քեզ»: Նպատակը՝ արժևորել արժեհամակարգ և ձևավորել ինքնավերլուծության կարողություն: |
| XI | «Բնական աղետներ»: Ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները: |
| XII | «Բարև ձմեռ» խորագրով պաստառի ձևավորում: Կազմակերպել ամանորի փոքրիկ միջոցառում և դասասենյակի ձևավորում: |
| XIII | «Կարող եմ օգտակար լինել» թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարի և դրական հատկանիշներ: |
| XIV | «Գնդլիկ բոքոնիկ» բեմականացման փորձեր անել: |
| XV | «Ինչպե՞ս վարվել աղջիկների հետ»: Օգնել աշակերտներին հասկանալ |

Scanned by TapScanner

| | |
|---|---|
| | «Քաղաքավարություն», «Հոգատարություն» հասկացությունները: |
| XVI | «Ինչպե՞ս վարվել աղբի հետ»: Բացատրել շրջապատը մաքուր պահելու, իրենց արտաքին տեսքին հետևելու անհրաժեշտությունը: |
| XVII | Ներկայացնել փոքրիկ պատմություններ ձմռան մասին: Ցուցադրել մուլտֆիլմեր «Ամանոր» թեմայով: |
| XVIII | Ներկայացնել փոքրիկ պատմություններ բնության վրա մարդու ազդեցության մասին: |
| XIX | Տարվա եղանակների մասին տեսանյութերի դիտում, սեփական ձեռքով նկարների պատրաստում: |
| XX | Անցկացնել զրույց «Մեզ շրջապատող հրաշալիքները» թեմայով: |
| XXI | «Հանդուրժողականություն»: Թեման ներկայացնել աշակերտների պատկերացումներով: |
| XXII | «Հարազատ մարդիկ»: Արժևորել և գնահատել ունեցածը: Պահպանել մարդկային բարձր արժեքները: |
| XXIII | «Գեղեցիկը մեր շրջապատումը»: Գեղեցիկի ընկալում և գնահատում: |
| XXIV | Առողջ սնունդ, առողջ ապրելակերպ: |
| XXV | Կարգապահություն դասի և դասամիջոցի ընթացքում: |
| XXVI | Զրույց «Կանանց միջազգային օրվա մասին»: Պաստառի պատրաստում: |
| XXVII | Անցկացնել զրույց «Կարողանալ լսել և հասկանալ դիմացինին» թեմայով: |
| XXVIII | Կոնֆլիկտներն ու դրանց առաջացման հնարավոր պատճառները: |
| XXIX | Զրույց «Էթիկայի կանոնները և մենք» թեմայով: |
| XXX | «Ճանաչել հայ նշանավոր արվեստագետներին», ֆիլմեր, նյութեր, զեկույցներ: |
| XXXI | «Հայոց մեծ եղեռն»: Աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունները: |
| XXXII | Անցկացնել զրույց «Խնդիրների համարեղ լուծում, որոշումների կայացում» թեմայով: |
| XXXIII | Պիտանի և արժանի լինելու գաղտնիքը: |
| XXXIV | Ուս-տարվա արդյունքների ամփոփում: |
| | |
| | |

Scanned by TapScanner